ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 1219 - Ա

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինության՝ քաղ. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Գ. Շերամի փողոց 103/3 հասցեում գտնվող՝ 778,3 քառ. մետր մակերեսով մարզադահլիճը, 40,1 քառ. մետր (80,2 խոր. մ) պարիսպը, 11,7 քառ. մետր (24,6 խոր. մ) պարիսպը, 1,1 քառ. մետր (1,5 խոր. մ) պարիսպը, 14,4 քառ. մետր (7,2 խոր. մ) պարիսպը, 18,8 քառ. մետր (18,8 խոր. մ) պարիսպը, 27,1 քառ. մետր (27,1 խոր. մ) պարիսպը (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 06032025-01-0341, այսուհետ՝ անշարժ գույք) անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարության ենթակայության «Երևանի Ս. Խանզադյանի անվան հ. 184 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (գրանցման համարը՝ 290.210.02816 / 2002-12-20, այսուհետ՝ կազմակերպություն):

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, հիմք ընդունելով N 06032025-01-0341 սեփականության իրավունքի գրանցման վկայականի տվյալները, կազմակերպության հետ կնքել 2009 թվականի ապրիլի 8-ին կնքված՝ անշարժ գույքի անհատույց օգտագործման թիվ 24/009 պայմանագրում սույն որոշումից բխող փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ դրանում նախատեսելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման կազմակերպության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ